


Փոլ Գալինեանի «Ուիլիըմ Սարոյեան- Մարդը, Գրողը» Ֆիլմի Ցուցադրութիւնը



Փոլ Գալինեան

Հ.Բ.Ը. Միութեան Նիւ Եորքի Կեդրոնական Գրասենեակի հովանաւորութեամբ եւ նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ Երջանային գրասենեակներու եւ Մասնահիւղերու համագործակցութեամբ կը շարունակուի ցուցադրուիլ Ֆրեզնո քաղաքի քնակիչ արուեստագէտ լուսանկարիչ Փոլ Գալինեանի պատրաստած «Ուիլիըմ Սարոյեան- Մարդը, Գրողը» լիամերձ ֆիլմը, որ կը ներկայացնէ ամերիկահայ մեծանուն գրողին կեանքի պատմութիւնը, պատմուած հայազգի համրաւար դերասան Մայք Բանըրգի («Մանիս» Գրիգոր Օհանեան) կողմէ: Ֆիլմը կ'ընդգրկէ յատկանշական պատմներ նոյնիման Ուիլիըմ Սարոյեանէն, որ կը խօսի իր ծնողներուն, ընտանիքին, իր հայ գրող ըլլալուն մասին «որ կը գրէ անգլերէն լեզուով»: Վաւերագրական այս ժապաւենը բացառիկ վկայութիւն մըն է նուիրուած Ֆրեզնո քաղաքին

ինչպէս նաեւ այդ տարիներու հայ եւ ամերիկեան գաղութներու զարգացման գործընթացին:

Գրող եւ ֆիլմարտադրիչ Փոլ Գալինեան մրցանակի արժանացած իր գործը կը շարունակէ ցուցադրել ամերիկեան եւ եւրոպական շրջապատյառով մը, որ սկսաւ Միացեալ Նահանգներէն: Արդարեւ, Գալինեան փափաքեցաւ իր գործը նախ ցուցադրել ամերիկեան շրջապատյառի մը ընթացքին ու անկէ ետք միայն անցնիլ արտասահմանեան այլ ցուցադրութիւններու, նախ քան որ ֆիլմը պատրաստ ըլլայ տեսերիզի վերածուելով մատչելի դառնալու հանրութեան:

Վաւերագրական այս ժապաւենի առաջին ցուցադրութիւնը կայացաւ 1991ին Ֆրեզնոյի «Ուիլիըմ Սարոյեան Թիւթըր» մէջ: Այդ թուականէն ի վեր ժապաւենը արժանացաւ միջազգային հինգ մրցանակներու եւ ժողովրդային ջերմ ընդունելութեան: Միացեալ Նահանգներէն մինչեւ Աւստրալիա եւ Եւրոպա, մեծ է հետաքրքրութիւնը հայ համայնքներուն, ուր ժապաւենը կը վերահրահրէ հայու հպարտութիւնը յատկապէս երիտասարդ սերունդին մօտ: Ցարդ, ժապաւենը ցոյց տրուած է Ֆրեզնոյի, Լոս Անճելէսի, Փասատինայի, Նիւ Եորքի, Գիլիլէտի, Շիֆակոյի, Տիբորոյի, Ֆինիքսի, Թորոնթոյի, Մոնթրէալի, Սիտնիի եւ Մելպուրնի մէջ եւ Հ.Բ.Ը. Միութեան վարժարաններու աշակերտութեան: Ծրագրուած է նաեւ ֆիլմը ցոյց տալ Եւրոպայի համայնքներուն:

Ֆիլմարտադրիչ եւ լուսանկարիչ Փոլ Գալինեան հանրածանօթ է նաեւ Սարոյեանի իր լուսանկարներով, որոցմէ մին 1991ին ընտրուած էր Միացեալ Նահանգներու եւ նախկին Սովետ Միութեան թղթատարական վարչութեանց կողմէ: Այդ դրոշմաթուղթը թողարկուեցաւ 1991ին:



Ուիլիըմ Սարոյեան